

Համահայկական Հիմնադրամ

All-Armenian Fund



Հայաստան Համահայկական Հիմնադրամի տարած աշխատանքները ներկայացնող տեսախտասալիկը 23 ֆետրուար 2008 միասնաբար դիտեցինք: Երեկոյի աւարտին Հայաստան Համահայկական Հիմնադրամի Աւստրիոյ Միասնականութեան Վարչութեան Նախագահ Ճարտարագէտ Ռազմիկ Թամրազեանց-Յարութիւնեանը մեզի հետաքրքրող հարցերուն պատասխանէց:

Wir haben uns zu einem Informationsabend der „All-Armenian Fund“ (DVD) versammelt, um die verwirklichten Projekte anzusehen. Wir haben Armenien von einer schöneren Seite kennengelernt. Dipl.-Ing. Beransch Hartunian-Tahmasians hat unsere Fragen beantwortet. Es war ein geselliger und langer Abend.


Bankverbindung:
BAWAG KNr. 05410283001 BLZ 14000

1982



Ժապավէն «Տակաւին»

Filmabend „Dagavin“



Այս շարժանկարի երեկոյան գրող, բեմադրիչ, դերասան և նկարիչ Վահէ Պէրպէրեանի «Տակաւին» տեսախտասալիքը ներկայացուէցաւ: Վահէ Պէրպէրեան 1955ին Պէյրուսթ ծնած է. հայրը Ակնցի և մայրը Արաբկիրցի է, 17 տարեկանին անցած է Եւրոպա, աւելի վերջ Կիպրոս, Քանատա, ի վերջոյ հաստատուած է Լոս Անճելըս: Իր գործերն են «Եւայլն», «Նաև», «Տակաւին», «Գիշերուայ այցելուն», «Վարդագոյն փիղը», «Աւազախրում», «Նամակներ

Ջաթարէն» և ամէնէ վերջինը «Պարոն Կարպիս»:

Vahé's hysterically funny and engaging monologue tackles diverse topics such as family, marriage, surveys, concentrating on the Armenian American identity and finally the importance of laughter. Along with personal stories and meditations on the Armenian condition, Vahé tries to find an answer to the question: Are the Armenians truly happy, or as an Irish newspaper claims are we the saddest nation on the planet?



«Երուանդ Օտեան»

„Yervant Odyan“



Գրիգոր Հալաճեան 12 Ապրիլին Երուանդ Օտեանի մասին մեզի հաճելի իրիկուն մը նուիրեց:

Քննադատական իրապաշտութեան մեծագոյն ներկայացուցիչն է Երուանդ Օտեան: Ան ծաղրի և ծիծաղի միջոցաւ մարդկային բնաւորութեան քննադատութեամբ երգիցական կտորներ ստեղծագործած է:

Ծնած է Պոլիս, հայրը Օսմանեան կայսրութեան հիւպատոս էր և այդ պատճառով Օտեան մանուկ հասակէն իսկ շրջուն կեանք ապրած է (Ֆրանսա, Իտալիա, Ռումանիա, Յունաստան): Հայերէն լեզուն սորուած է հօրագրող Եւփիմէ Օտեանի մոտ, կարճ ժամանակ մը Պերպէրեան վարժարան յաճախած և «Վարարան» թերթը հարատարակած է:

Ե. Օտեանի ընտանիքը գրականութիւնը սիրող և նաև գրականութեան հետևող անձերէ կազմուած էր՝ հօրեղբայրը Գրիգոր Օտեան եղած է քաղաքական գործիչ, մօրեղբայրը Գէորգ Ասլանեան եղած է պատմաբան:

Աշխատակցած է ժամանակակից ազգային գրեթէ բոլոր թերթերու հետ ինչպէս՝ «Ժամանակ», «Արևելք», «Հայրենիք», «Ազատամարտ», «Ճակատամարտ», «Արև», «Միութիւն», «Ազատ Խօսք» և այլն:

1896 Օգոստոսին Պանք Օթթօմանի դէպքին օրը կը հեռանայ Պոլսէն և մինչև 1908 թափառական կեանք մը կ'ունենայ՝ Աթէնք, Եգիպտոս, Փարիզ, Լոնտոն, Վիեննա և Հնդկաստան: Օսմանեան Սահմանադրութեան հռչակումի օրերուն կը վերադառնայ Պոլիս: 1908էն մինչև 1915 բեղուն եղած է Ե. Օտեանի արտադրութիւնը: 1915 Օգոստոսին կ'աքսորուի մինչև Տէր-Չոր հրաշքով կը փրկուի: Աւելածու կը դառնայ, կ'իսլամացնեն զինքը, յետոյ կը դառնայ թարգման գերմանացիներու մօտ: Զինադադարէն ետք կ'ազատուի և կը վերադառնայ Պոլիս Նոյեմբեր 1918ին:

1922ին կը մեկնի Պոլիսէն, կ'անցնի Պուքրէշ, Սուրիա, Լիբանան, և Եգիպտոս ուր կը մահանայ 1926ին:

Օտեանի գործերը կարող ենք վերածել չորս մասերու

- Վիպական
- Երգիծաբանական
- Քրոնիկ
- Յուշագրական

Գլխաւոր վէպերը՝ «Ընտանիք, պատիւ բարոյական», «Թաղականին կնիկը», «Միջնորդ տէր Պապան», «Ես դրսեցի չեմ առներ» և այլն, նորավէպեր՝ «Մարտիկ Աղա», «Ազգային Բարերար», «Ոսկեմոլը», «Հայ Կուլտուրականները» և այլն:

Երգիծաբանականներ՝ «Համբարձում Աղա», «Պատերազմ և Խաղաղութիւն», «Առաքելութիւն մը ի Ծապլվար», «Ընկեր փանջունի Վասպուրականի մէջ», «Ընկեր փանջունի Տարադրութեան մէջ», «Մեր Երեսփոխանները» և այլն:

Իր ծանօթ կատակերգութիւններն են՝ «Չարչըլը Արթին Աղա», «Չավալլըն», «Հերոսախաղը» և այլն, այստեղ իրեն օգտակար եղած է իր գրչեղբայրը՝ Միքայէլ Կուրճեանը:

Անթիւ են իր քրոնիկները՝ «Առտուան տոմսակներ» կամ «Աւուր Պատշաճի», «Վերնատունէն», ինչպէս՝ «Պահպանողականը»:

Յուշագրական՝ «Տասներկու տարի Պոլսէն դուրս», «Անիծեալ Տարիներ» Երևան 2004, «Գրական Յիշատակներ», «Մանկութեան Յիշատակներ», «Արիւնտ Յիշատակներ», «Վերյիշումներ», «Տասնուվեց տարի ետք»:

Այս բոլորէն դուրս կատարած է բազմաթիւ թարգմանութիւններ: Օտեանի գործերէն ոմանք թարգմանուած են Ֆրանսերէնի, Յունարէնի, Ռուսերէնի, Պուլկարերէնի և Թրքերէնի:

Գրիգոր Հալաճեան

